ԱՇՈՏ ԱՂԱՍՈՒ ԹԱՎԱԴՅԱՆ, *տ.գ.դ., պրոֆեսոր*
ՀՊՏՀ խորհրդատու, տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչ
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՈՒ ՆԵՐՔԻՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետությունը Ռուսաստան արտահանում է պատրաստի արտադրանքի բացարձակ մեծամասնությունը: Նշենք, որ պատրաստի արտադրանքի արտահանումը, ի տարբերություն հումքի արտահանման, առանցքային հիմնախնդիր է տնտեսության համար: Ռուսաստանի ՀՆԱ-ն կազմում է ԵԱՏՄ երկրների ՀՆԱ 85%-ը[1], դրամական փոխանցումների (մասնավորապես՝ Հայաստան) կրճատվող ծավալները, ընդհանուր պահանջարկի իջնող մակարդակը հանգեցնում են ՀՆԱ աճի տեմպի նվազմանը և վճարային հաշվեկշռի վատթարացմանը ԵԱՏՄ երկրներում: Միևնույն ժամանակ, Ռուսաստանի վարկանիշների իջեցումը միջազգային գործակալությունների կողմից կարող է բացասաբար անդրադառնալ վարկային ռեսուրսների ստացման հնարավորությունների վրա:

Արտարժույթով բյուջետային եկամուտների կրճատումը, գնողունակության անկումը Ռուսաստանում, ներդրումների նվազումը բերեց Հայաստանից ներկրվող պատրաստի արտադրանքի նկատմամբ պահանջարկի նվազեցմանը, ինչպես նաև կրճատվեցին Ռուսաստանից փոխանցվող տրանսֆերտները, որոնք կազմում են ընդհանուր տրանսֆերտների մոտ 80%-ը: Այստեղ իր դերն է ունեցել նաև այն, որ ռուսական ռուբլու փոխարժեքը դոլարի նկատմամբ էապես ավելի շատ նվազեց, քան հայկական դրամի փոխարժեքը: Ռուսական շուկայի պահանջարկի նվազումը արտաքին մարտահրավեր է Հայաստանի տնտեսության համար: Նշենք որ ռուսական շուկայի իրավիճակի բացասական երևույթները անդրադարձել են տարածաշրջանի բոլոր երկրների վրա և դա փաստացի կախված չէ Եվրասիական տնտեսական միության հետ:

Հակառակը, ԵԱՏՄ երկրներում տնտեսության անորոշության միջակայքի կտրուկ աճի պայմաններում ՀՀ տնտեսության զարգացման հավանականությունը կարող է էապես բարձրանալ հակաճգնաժամային միջոցառումների արդյունավետ իրականացվող համաձայնեցված քաղաքականությամբ:

«ՌԴ արդյունաբերական քաղաքականության մասին» օրենքը[2] միջնաժամկետ հեռանկարում կարող է նպաստել այն բեկումնային ներուժի ստեղծմանը, որը թույլ կտա մոտ ապագայում հասնել արմատական փոփոխության երկարաժամկետ դինամիկ տնտեսական աճի ապահովման հնարավորությունների հարցում՝ հիմք ունենալով մարդկային և ինովացիոն ներուժը, հինգերորդ տեխնոլոգիական կարգի վերականգնման և վեցերորդ տեխնոլոգիական կարգին անցնելու համար պայմանների ստեղծման նպատակով: Սա կարող է նաև հիմք ծառայել, որպեսզի Ռուսաստանը ներկայանա ոչ թե միայն որպես խոշոր տարածաշրջանային երկիր, այլև պետություն՝ մեծ ներուժով, առաջին հերթին՝ տնտեսության այն ոլորտներում, որոնք կապահովեն նոր ինդուստրիալիզացումը: Ռուսաստանը մի շարք նորարարական ոլորտների գծով զբաղեցնում է աշխարհում առաջատար դիրքեր, բայց առայժմ դա համընդհանուր բնույթ չունի: Ռուսաստանը, կարող է էապես հզորացնել ինովացիոն հատվածը տնտեսության շատ ոլորտներում: Դա անհրաժեշտ է Ռուսաստանին, ակնհայտ է, որ դրանից պետք է օգտվի նաև Հայաստանը, քանի որ փոքր տնտեսություն ունեցող երկրները, ինչպես ցույց է տալիս համաշխարհային փորձը, սովորաբար չեն կարող արժանի տեղ գրավել արդի ինդուստրիալիզացման ոլորտում՝ առանց տարողունակ շուկայի, համաձայնեցված տնտեսական քաղաքականության և ֆինանսական ու հումքային ներուժի համատեղման: Այդ հնարավորությունից օգտվելու համար հրամայական է ելնելով ԵԱՏՄ պայմանագրի դրույթներից ձեռք բերել համապատասխան համաձայնություններ և իրականացնել դրանք: Նշենք, որ ԵԱՏՄ Պայմանագրի 4-րդ հոդվածը

[1] IMF, Gross domestic product, nominal

[2] Федеральный закон от 31.12.2014 N 488-ФЗ (ред. от 13.07.2015) "О промышленной политике в Российской Федерации"

ուղղակի նշում է, որ Միության հիմնական նպատակն է նաև ազգային տնտեսությունների բազմակողմանի արդիականացումը, կոոպերացիան և մրցունակության աճը[1]:

Գոյություն ունի առասպել այն մասին, թե զարգացած երկրների հետ ինտեգրման պարագայում կարելի է շատ արագ դառնալ ինովացիոն երկիր, բայց եթե համագործակցության այս վեկտորը չի համապատասխանում երկրի տնտեսական զարգացման իրական վեկտորին, ապա ակնկալվող արդյունքը չի ստացվի: Տնտեսական զարգացման վեկտորն առաջին հերթին որոշում են պետության տնտեսական շահերը, այլ ոչ թե այս կամ այն համաձայնագրերը: Բացի այդ, այստեղ կարևոր է ոչ միայն զուտ տնտեսական աճը, այլ նաև զարգացման սցենարը: Եթե ինտեգրացիան հանգեցնում է հիմնականում միայն ներքին շուկայի աշխուժացմանը՝ ի հաշիվ վարկերի, դրամաշնորհների և դրամական փոխանցումների, ապա հարկ կլինի երկար սպասել ՀՆԱ էական աճի և արդի ինովացիոն կառուցվածքի, դրա հավանականությունը շատ փոքր է: Իսկ եթե ինտեգրացիայի միջոցով էապես զարգացվի արտահանումը, ընդ որում՝ հնարավորինս բարձր ավելացված արժեք ունեցող արտադրանքինը (այդ թվում՝ ինովացիոն), ապա դա, իհարկե, կայուն կերպով կնպաստի որակապես նոր տնտեսական աճի կայացմանը:

Հաջորդ արտաքին մարտահրավերը Եվրասիական տնտեսական միության ոչ համաձայնեցված մակրոտնտեսական քաղաքականությունն է, որի համաձայնեցման պայմանները նշված են ԵԱՏՄ պայմանագրում և, չնայած բավականին լայն հնարավորություններ են տալիս, դրանք չեն կատարվում: Հայտնի է, որ կամայական միությունում մակրոտնտեսական ցուցանիշների համաձայնեցումը միության կարևորագույն հիմնախնդիրն է, օրինակ՝ Եվրամիությունում մակրոցուցանիշները համաձայնեցվում են 1992թ. ընդունված Մաստրիխտյան հայտանիշների հիման վրա՝ պետական բյուջեի պակասուրդը չպետք է գերազանցի ՀՆԱ-ի 3%-ը, պետական պարտքը՝ 60%-ը, գնաճը երկրում չպետք է գերազանցի ամենացածր գնաճային մակարդակը 1.5 տոկոսային կետով, երկարաժամկետ վարկավորման տոկոսադրույքները չպետք է գերազանցեն նվազագույնը 2 տոկոսային կետով, իսկ ազգային փոխարժեքը փաստացի փոխկապակցվում է եվրոյին[2]: ԵԱՏՄ-ում համաձայն պայմանագրի 63 հոդվածի պակասուրդը նույնպես չպետք է գերազանցի ՀՆԱ-ի 3%-ը, պետական պարտքի նկատմամբ նույնիսկ ավելի խիստ ցուցանիշ է դրված՝ այն չպետք է գերազանցի ՀՆԱ-ի 50%-ը, սակայն թույլ է տրվում, որ գնաճը տարբերվի նվազագույն գնաճից 5 տոկոսային կետով, փոխարժեքի մասով 64 հոդվածում չնայած նշվում է համաձայնեցված արժույթային քաղաքականության մասին, սակայն այդ դրույթը կոնկրետացված չէ: Նույնիսկ գնաճի վերաբերյալ բավականին լիբերալ այս ցուցանիշը չի կատարվում: Իսկ արժույթային քաղաքականությանը փաստացի չի համաձայնեցվում: Այսպես Հայաստանում գնաճը 2015թ. եղել է -0.1%, Ռուսաստանում՝ 13%, իսկ ԵԱՏՄ այլ երկրներում՝ նույնիսկ ավելի բարձր: Փաստացի լիարժեք չհամաձայնեցված մակրոտնտեսական քաղաքականությունը միությունում մարտահրավեր է հայկական ապրանքների արտահանման և տնտեսության զարգացման համար: Զարգացած փոքր երկրներում արտահանման և ՀՆԱ հարաբերակցությունը ցածր չէ 30%-ից, քանի որ ակնհայտ է, որ շուկան այնտեղ մեծ չէ, և արտահանումը դառնում է զարգացման վճռական գործոն:

Երրորդ մարտահրավերը տարածաշրջանի ոչ կայուն իրավիճակն է, որը պարտադրում է ռազմական ծախսերի աճ, ռազմաարդյունաբերական համալիրի և դրա հետ ուղղակի փոխկապակցված գիտատեխնոլոգիական ոլորտի զարգացում:

ՀՀ տնտեսության համար մարտահրավեր է նաև գունավոր մետաղների վերջին տարիներին գների ոչ բավարար դինամիկան: 2015թ. պղնձի գինը նվազել է 24% 6230 դոլարից, մինչև 4760 դոլար[3], ի դեպ գունավոր մետաղների խտանյութի արտահանումը Հայաստանում կազմում է մոտ 30%: Գունավոր մետաղների գների երկարաժամկետ անկումը արտաքին մարտահրավեր է. այստեղ որպես ներքին մարտահրավեր կարելի է նշել, որ գունավոր մետաղները արտահանվում են խտանյութով: Որպեսզի մեծացվի գունավոր մետաղների արտադրական համալիրի ավելացված արժեքը նպատակահարմար է իրականացնել համապատասխան փոփոխություններ տնտեսական քաղաքականությունում:

Կարծում եմ մարտահրավեր է նաև դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների ոչ բավարար համաձայնեցումը: Դա կարող է բերել բարձր իրական վերաֆինանսա-

[1] http://docs.cntd.ru/document/420205962

[2] http://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=URISERV:l25014

[3] Динамика цен на медь (LME.Copper, USD за тонну) https://news.yandex.ru/quotes/1501.html

վորման տոկոսադրույքին, ոչ բավարար փողայնացման մակարդակին, միջազգային պահուստների կրճատմանը, պետական պարտքի աճին, արտահանման համար ոչ նպաստավոր պայմանների ստեղծմանը, պետական բյուջեի եկամուտների կրճատմանը և ՀՆԱ-ի աճի համար պայմանների վատթարացմանը: Ելնելով սահմանադրության դրույթներից ուղղակի անհրաժեշտ է, որ դրամավարկային քաղաքականությունը նպաստի ոչ միայն գների կայունությանը, այլ նաև ընդհանուր ֆինանսական կայունությանը:

Ներքին մարտահրավեր է կոռուպցիայի մակարդակը Հայաստանում, ինչը ձեռք է բերում առավել նշանակություն հատկապես ճգնաժամային իրավիճակում: Transparency International-ի դասակարգմամբ՝ կոռուպցիայի մակարդակը ԵԱՏՄ երկրներում չի կարելի բավարար համարել, վիճակը համեմատաբար բարվոք է գնահատվում Հայաստանում, թեև այստեղ էլ կոռուպցիայի ընկալման ինդեքսը դեռ բավարար չէ: Կոռուպցիայի ընկալման առավելագույն հնարավոր ինդեքսի (100 միավոր) պարագայում Հայաստանում այդ ինդեքսի մեծությունը հավասար է 35-ի, ԵԱՏՄ մյուս երկրներում՝ 32 և ավելի ցածր[1]: Հնարավոր 100 միավորից այդ ինդեքսի կրիտիկական շեմին՝ 50 միավորին, արագ հասնելը պետք է ուղենիշ դառնա Հայաստանի համար:

Արտահանման աճը առավել հավանական է այն ոլորտներում և այն երկրներում, որտեղ կա տվյալ ապրանքի պահանջարկը: Այն հնարավոր մակարդակի չի հասնում այն պատճառով, որ առայժմ բավարար չափով համաձայնեցված չէ հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունը, ինչը պայմանավորված է նաև ԵԱՏՄ-ում ազգային արժույթների փոխարժեքների չհամաձայնեցվածությամբ: Հայաստանի համար արտահանման ներուժ ունեն գյուղատնտեսական և գինու-կոնյակի արտադրանքները, թեթև և քիմիական արդյունաբերությունը, գունավոր մետաղների խոր վերամշակումը, թանկարժեք քարերի և մետաղների մշակումը: Հատկապես առաջնահերթ է ռազմարդյունաբերության ոլորտի, գիտատեխնոլոգիական արտադրության էապես զարգացնելը և արտահանման նոր հնարավորությունների ստեղծումը:

Անհրաժեշտ է ճշգրտել և համաձայնեցնել տնտեսական քաղաքականության գերակայությունները, հստակ որոշել նրա նպատակները, ձևավորել ՀՀ տնտեսության զարգացման նոր մոդելը, կանխատեսել ակնկալվող արդյունքները: Չափազանց կարևոր է տնտեսական քաղաքականության, հատկապես դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականության արձագանքը տնտեսական անվտանգության խախտման արձանագրվող ազդակներին՝ ՀՆԱ անկում, առևտրային հաշվեկշռի պակասուրդի մեծացում, գնաճի և գործազրկության աճ: Արտաքին բացասական ազդեցություններին դիմակայելու ունակությունը տնտեսության զարգացման կարևոր պայման է:

Նպաստավոր է նաև մշակել հակաճգնաժամային ծրագիրը, որը պետք է ունենա մի շարք կարևոր ուղղություններ, մասնավորապես՝ ոչ հումքային, հատկապես բարձր տեխնոլոգիական ապրանքների արտահանմանն աջակցություն, փոքր և միջին բիզնեսի, պաշտպանության պատվերի իրականացման խրախուսում, բյուջետային եկամուտների և ծախսերի օպտիմալացում: Միասնական տնտեսական տարածքում պետք է հնարավորինս օգտվել կոոպերացիայի, նաև հակաճգնաժամային միջոցառումների առումով, հատկապես բարձր տեխնոլոգիական ապրանքների, պաշտպանության արտադրության ոլորտներում, հումքի վերամշակման խնդիրները լուծելիս:

Արտահանողներին և, առաջին հերթին՝ ներքին շուկայում ներմուծմանը փոխարինող արտադրությանը պետք է տրվեն պետական երաշխիքներ, որոնք, ի տարբերություն բյուջետային վարկերի, չեն ենթադրում առանց այդ էլ սահմանափակ պետական միջոցների ծախսում: Միևնույն ժամանակ, գերակայություն պետք է ունենա ոչ թե հումքային արդյունաբերությունն իր էքստենսիվ աճով, այլ այն ձեռնարկությունները, որոնք հենվում են հումքի վերամշակման խոր արդիականացման վրա՝ ավելացված արժեքի էական ավելացման նպատակով:

Նպատակահարմար է պետական երաշխիքներն առաջին հերթին տրամադրել արտադրության այն տեսակներին, որոնցում՝ օգտագործվում են տեղական հումքը, վերամշակումը հնարավոր է տեղում, կա կայուն պահանջարկ ներքին կամ համաշխարհային շուկայում և, հետևաբար, բարձր է տվյալ արտադրանքի արտահանման հնարավորությունը: Երաշխիքներ տրամադրելիս պետք է խրախուսել ընկերությունների՝ բաց տիպի ընկերությունների վերակազմակերպվելու հնարավորությունը: Հակառակ պարագայում փոքրանում է լուրջ ներդրումների հավանականությունը:

[1] https://www.transparency.org/country/#ARM

Անհրաժեշտ է արագացնել հարկման բարեփոխումը ինչպես հարկերի տոկոսադրույքների ճշտման, այնպես էլ վարչարարության մասով, ինչը թույլ կտա աշխուժացնել տնտեսությունը, այդ թվում շոշափելիորեն նվազեցնել ներկրվող ապրանքների մենաշնորհային մակարդակն ու խթանել արտահանման դիվերսիֆիկացիան: Ավելացված արժեքի հարկը Հայաստանում ավելի բարձր է, քան տարածաշրջանի երկրներում, ընդ որում՝ ավելի ցածր տոկոսադրույք չի կիրառվում: Նպատակահարմար է ԱԱՀ-ն նվազեցնել առնվազն 20-ից մինչև 18%-ի, իսկ որոշ ապրանքների համար սահմանել նույնիսկ ավելի ցածր: Հաշվի առնելով, որ այս միջոցները պետք է խթանեն տնտեսությունը, բյուջետային կորուստներ (հատկապես երկարաժամկետ առումով) չեն սպասվում: Անուղղակի հարկի իջեցումը, զսպելով անկումը, խթանում է տնտեսությունը, ինչպես նաև հակազդում է գնաճին: Նպատակահարմար է նաև ԵԱՏՄ երկրների մյուս հարկային տոկոսադրույքների համաձայնեցումը: Հայաստանում չեն կիրառվում նաև հումքի արտահանման մաքսատուրքերը:

Բյուջետային ծախսերի օպտիմալացումը, հատկապես ճգնաժամային իրավիճակում, չափազանց կարևոր է: Պետական բյուջեի ծախսերի կրճատումը, օրինակ, օտարերկրյա սարքավորումների և մեքենաների ձեռքբերման վրա, և նվազագույն աշխատավարձի ու թոշակի բարձրացումը նպաստում են ոչ միայն սոցիալական խնդիրների լուծմանը: Խթանվում է նաև հայրենական արտադրանքի ներքին պահանջարկը՝ հավելյալ ազդակ հաղորդելով հայրենական արտադրության, հատկապես գյուղատնտեսության զարգացմանը:

Բնակչության անապահով խավերի եկամուտների աճը՝ ի հաշիվ պետական բյուջեում առաջարկվող փոփոխությունների, հանգեցնում է առաջին հերթին հանրապետությունում արտադրվող արտադրանքի պահանջարկի աճին և ներկրվող արտադրանքի հանդեպ պահանջարկի համապատասխան կրճատմանը: Այս խմբում առաջին անհրաժեշտության արտադրանքների սպառման բաժինը էապես բարձր է: Հետևաբար, թոշակների և նպաստների բարձրացումը, սոցիալական խնդիրներ լուծելուց բացի, նպաստավոր է նաև տեղական արտադրության համար:

Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրում մի շարք բաժիններ առանցքային նշանակություն ունեն, մասնավորապես XIV՝ «Արժութային քաղաքականություն» բաժինը և համապատասխան N15 հավելվածը՝ «Համաձայնեցված արժութային քաղաքականության անցկացմանն ուղղված միջոցառումների մասին»: Այս բաժնի դրույթների առաջնահերթ կոնկրետացումը շատ կարևոր է ճգնաժամային իրավիճակում:

Այլ երկրների արժույթներից կախվածությունը նվազեցնելը, ազգային արժույթի դերի և ոսկու պաշարների նշանակալիության բարձրացումը արտաքին տնտեսական հաշվարկներում արդարացված են: Բայց դա արդյունք չի տա, եթե չիրականացվի համաձայնեցված դրամավարկային քաղաքականություն: Անհրաժեշտ է փուլային անցում, որպեսզի Եվրասիական տնտեսական միության երկրներում գնաճը 5%-ից բարձր չլինի: Իսկ ազգային արժույթների փոխարժեքների նվազումը ԱՄՆ և Եվրամիության արժույթների համեմատ պետք է համապատասխանի գնաճին: Միևնույն ժամանակ, պետք է ապահովել փողայնացման աճը և ունենալ տնտեսության զարգացմանը համապատասխանող իրական վերաֆինանսավորման տոկոսադրույք:

Ռուսաստանում փողայնացման մակարդակը մոտ 50% է, ԵԱՏՄ մյուս երկրներում՝ էլ ավելի ցածր, այն դեպքում, երբ Եվրամիության երկրներում այդ ցուցանիշը 100%-ի կարգի է: Չինաստանում և Ասիայի արագ զարգացող երկրներում դրամայնացումը զգալիորեն բարձր է 100%-ից[1]: Տնտեսության զարգացմանը նպաստող իրական վերաֆինանսավորման տոկոսադրույքը նպաստավոր է նաև փողայնացման մակարդակի փուլ առ փուլ մոտեցմանը 70%-ի սահմանին, հակառակ դեպքում պարբերաբար առաջ կգան որոշակի դժվարություններ տնտեսության կայուն աճի և դրա դիվերսիֆիկացման հնարավորությունների հետ կապված:

Անհրաժեշտ է մշակել կոռուպցիայի հակազդման համաձայնեցված միջոցառումներ, այստեղ, ի դեպ, դեր կարող է ունենալ նաև Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի 69-րդ՝ «Թափանցիկություն» հոդվածը:

Անարդյունավետությունը, հատկապես կոռուպցիոն դրսևորումները սկզբից ևեթ պետք է հանգեցվեն նվազագույնի: Դա շատ ավելի արդյունավետ է, քան կամա թե ակամա կոռուպցիոն ռիսկեր թույլ տալը և դրանից հետո միայն դրանք վերահսկելն ու չարաշահումները բացահայտելը: Վաղուց հասունացել է հակակոռուպցիոն փորձաքննության, հատկապես տնտեսական գործունեությունը կարգավորող օրենքների անհրաժեշտությունը:

[1] World Bank data, Money and quasi money (M2) as % of GDP

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՈՒ ՆԵՐՔԻՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

ԱՇՈՏ ԱՂԱՍՈՒ ԹԱՎԱԴՅԱՆ, *տ.գ.դ., պրոֆեսոր*
ՀՊՏՀ խորհրդատու, տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչ
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող

Համառոտագիր

Հոդվածում ներկայացված են ՀՀ տնտեսության արտաքին և ներքին մարտահրավերները: Որպես արտաքին մարտահրավեր նշվում են Ռուսաստանում գնողունակության անկումը, Եվրասիական տնտեսական միության ոչ համաձայնեցված մակրոտնտեսական քաղաքականությունը և տարածաշրջանի ոչ կայուն իրավիճակը: Որպես մարտահրավեր նշվում է նաև գունավոր մետաղների գների փոփոխությունը: Հայաստանի ներքին մարտահրավերներից են դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների ոչ բավարար համաձայնեցումը, ինչպես նաև կոռուպցիայի մակարդակը: Ներկայացված են տվյալ մարտահրավերների հաղթահարման ուղիները:

Բանալի բառեր. *արտաքին մարտահրավերներ, ներքին մարտահրավերներ, ԵԱՏՄ, դրամավարկային քաղաքականություն, հարկաբյուջետային քաղաքականություն, կոռուպցիա, արտահանում, գերակայություններ, հակաճգնաժամային ծրագիր:*

ВНЕШНИЕ И ВНУТРЕННИЕ ВЫЗОВЫ ЭКОНОМИКИ АРМЕНИИ И ПУТИ ИХ ПРЕОДОЛЕНИЯ

АШОТ АГАСИЕВИЧ ТАВАДЯН, *д.э.н., профессор*
консультант, заведующий кафедрой экономико-математических методов
Армянского государственного экономического университета
главный научный сотрудник Института экономики им. М. Котаняна НАН РА

Аннотация

В статье представлены внешние и внутренние вызовы экономики Армении.В качестве внешних вызовов отмечены снижение покупательной способности в России, несогласованная макроэкономическая политика ЕАЭС и нестабильная ситуация в регионе, а также изменение цен на цветные металлы. В числе внутренних вызовов Армении выделены недостаточная координация денежно-кредитной и налогово-бюджетной политики, а также высокий уровень коррупции. Представлены пути преодоления данных вызовов.

Ключевые слова: *внешние вызовы, внутренние вызовы, ЕАЭС, денежно-кредитная политика, налогово-бюджетная политика, коррупция, экспорт, приоритеты, антикризисная программа.*

EXTERNAL AND INTERNAL CHALLENGES OF ARMENIA'S ECONOMY AND WAYS TO OVERCOME THEM

ASHOT AGHASI TAVADYAN, *Doctor of Sciences (Economics), Professor*
Adviser, Head of Chair of Mathematical Methods in Economics, Armenian State University of Economics
Chief Research Associate, M. Kotanyan Institute of Economics, National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract

The article presents the external and internal challenges the Armenian economy faces. The decline in the purchasing power in Russia, uncoordinated macroeconomic policies of the EAEU member-countries and unstable situation in the region are among the external challenges. The fluctuation in the prices of nonferrous metals is an external challenge the economy of Armenia faces as well. As internal challenges the article highlights the lack of coordination of monetary and fiscal policies, as well as the level of corruption. The author presents approaches toaddressing and overcoming these challenges.

Keywords: *External challenges, internal challenges, EAEU, monetary policy, fiscal policy, corruption, exports, priorities, crisis response program.*